ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-23/1

ք.Երևան «25» Մայիսի 2023թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հովհաննիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Մարգարա» մաքսային կետի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի կազմման ժամանակ նախագծողը՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 28 291 400 **(Քսանութ միլիոն երկու հարյուր ինսունմեկ հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Արբակ և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Նորագավիթ, Արտաշատի խճ. 66 տ
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011030534	Հ/Հ 1930003063270100
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 02228418
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	«Արբակ և որդիներ» ՍՊԸ -ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«25» դեկտեմբեր 2023 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-23/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքների*							
Հ/Հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չ/մ	քանակը	աշխատանքների կատարման վայրը	ընդհանուր գին ՀՀ դրամ	Աշխատանքների կատարման ժամկետը
1.	«Մարգարա» մաքսային կետի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ CPV – 71241200/3	Նախագիծը կազմել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N-128-Ն հրամանով հաստատված բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները: Մաքսակետի կառուցման և դրա նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման համար նախատեսված են խիստ սահմանափակ ժամկետներ և դրանք սահմանված ժամկետում իրականացնելու նպատակով անհրաժեշտ է շինարարական և նախագծման աշխատանքները կատարել զուգահեռ՝ փուլային տարբերակով: Մասնավորապես, առաջին փուլում անհրաժեշտ է նախագծել տարածքի ուղղաձիգ հատակագծման, արտաքին և ներտարածքային ինժեներական ենթակառուցվածքների, շենքերի հիմքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա շինարարական աշխատանքների համար, իսկ երկրորդ փուլում շինարարական աշխատանքների ավարտման գծով պահանջվող բոլոր աշխատանքների համար (շենքերի կառուցում, ներքին ինժեներական համակարգեր, բարեկարգման աշխատանքներ, ներքին հարդարման աշխատանքներ, սարքավորումների մոնտաժում, գույքի տեղադրում և այլն): Նախագծով նախատեսել՝ - մեկ հարկանի սպասարկման սրահ սենդվիչ պանելներով – 768 քմ (32x245մ), -ավտոմեքենաների ձևակերպման երկու հատ տաղավարներ – 18 քմ (2x9քմ) -հերթափոխի հանգստի երկու հատ տաղավար – 36 քմ (2x18քմ) -մեկ հարկանի սենդվիչ պանելներով մանրամասն զննման մասնաշենք – 84 քմ -ավտոկայանատեղիներ, հարթակներ և ներտարածքային ճանապարհներ – մոտ 2,500 քմ -երկու հատ հսկիչ անցագրային կետ - 10 քմ (2x5քմ)	դրամ	1	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնքի Մարգարա գյուղի Արմավիր-Մարգարա մայրուղի 12, Մայրուղի 12/1 և Մարգարա մայրուղի 12/2 հասցեներում գտնվող հողամասեր	28 291 400	Աշխատանքներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված՝ 45 օրացուցային օրվա ընթացքում:

		-մեկ հարկանի պահեստային մասնաշենք սենդվիչ պանելով - 72 քմ (6x12մ) Շենքի առավելագույն բարձրությունը կազմում է 7 մ, իսկ կառուցապատման ընդհանուր մակերեսը – 988 քմ - Ճանապարհի հիմնանորոգում 200 գծմ - ջրամատակարարման արտաքին ցանց - ջրամատակարարման ներքին ցանց -կոյուղու արտաքին ցանց - կոյուղու ներքին ցանց -ջրամատակարարման պոմպակայան -հակահրդեհային ջրամբար -արտաքին հրդեհաշիջում -անձրևաջրերի հեռացման ցանց -էլեկտրամատակարարման համակարգ -ցածրահոս համակարգ և տեսահսկում -տարածքի արտաքին լուսավորության համակարգ - Կեղտաջրերի մաքրման կայան /սեպտիկ հոր/ - ՈԴ սահմանապահներին սպասարկող գրունտային ճանապարհի կառուցում - Ե/բետոնե հենապատի կառուցում - Արգելափակոցների տեղադրում 4 հատ - Մոդուլային ցանկապատի կառուցում - Սարքավորումներ (գեներատոր 200ԿՎտ,լուսացույց,ավտոմոբիլային տրանսպորտի հարկադրված կանգնեցմող միջոցներ - Ավտոմեքենաների զննման ե/բետոնե հորեր - Մետաղական դարպասների տեղադրում Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար վճարումը կիրականացվի փուլային տարբերակով՝ յուրաքանչյուր փուլի համար փորձաքննության դրական եզրակացության ստացման և կատարողական փաստաթղթերի առկայության դեպքում: Նախագծողը պետք է իրականացնի տարածքի ինժեներաերկրաբանական հետազննություն: Նախատեսվում է՝ - ուսումնասիրել տարածքը և ձեռք բերել օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն (-ներ), - ձեռք բերել գոյություն ունեցող փայտյա տների (այդ թվում արտաքին հաղորդակցուղիների) տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն (-ներ), ինչպես նաև իրականացնել գեոդեզիական աշխատանքներ,					

		- ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների (կառուցապատման նախագծի և նոր շենքերի կառուցման վերաբերյալ) համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար, - շենքի համալրում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովող սարքավորումներով՝ թեքահարթակներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, երկու և ավելի հարկայնության դեպքում վերհանսարք կամ վերելակ, ինչպես նաև այլ միջոցառումներ նախատեսված օրենսդրությամբ - նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման, էներգախնայողության/ համակարգերի կառուցում, բազմաբնակարան շենքի արդիական ներքին հարդարում, - նախագծով նախատեսել նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի փետրվարի 9-ի N 09-Ա հրամանով հաստատված՝ պահանջներին համապատասխան <Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառուցման (այդ թվում՝ վերակառուցման, հիմնանորոգման, արդիականացման, վերազինման, ընդլայնման, քանդման կամ ապամոնտաժման) աշխատանքներ կատարողների և տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ շինարարական աշխատանքների ընթացքում նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանման, հայտնաբերված խախտումների և թերությունների համար պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ մեթոդական խորհրդատվության դրույթների>՝ տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն, արտաքին խաղահրապարակի և վերգետնյա ավտոկայանատեղիի կառուցում, ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապամոնտաժման) կառուցել-վերակառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ)՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով.					

		- տարածքի բնակլիմայական պայմանների հաշվառմամբ, ըստ անհրաժեշտության, նախատեսել այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործման համակարգեր՝ արևային ջրատաքացուցիչներ, ֆոտովոլտային սալիկներ, շենքերում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար - նախագծման ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով. • Նախագծային լուծումների շրջանակներում նախատեսվում է շենքի կառուցման աշխատանքներ՝ նորմատիվ պահանջների և համայնքի իրական կարիքի հաշվառումով. • Տարածքում գոյություն ունեցող և շահագործման համար ոչ պիտանի շենք-շինությունների քանդման, նոր շենքերի ու շինությունների կառուցման և բնակավայրի կառուցապատման աշխատանքների նախագծային փաստաթղթեր՝ տեխնիկական պայմանների, ինժեներաերկրաբանական հետազննությունների, տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացությունների հիմքով • Նախագծային լուծումներով անհրաժեշտ է ապահովել շուրջ ..... քմ ընդհանուր մակերեսով նոր շենքի կառուցման և բնակավայրի կառուցապատման աշխատանքներ՝ նորմատիվային պահանջների համաձայն՝ համայնքի կարիքի գնահատմամբ • շենքերի ընդհանուր նկարագիր՝ նկուղային հարկի առկայություն (որպես քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույց օգտագործելու համար), շենքերի հարկայնությունը մինչև .....վերգետնյա հարկ, սենքերի/մակերեսների կազմն ըստ նախնական տվյալների (ենթակա է հստակեցման համայնքի ղեկավարի կամ պատվիրատուի հետ) • կաթսայատան և պոմպակայանի կառուցման նախագծեր՝ ըստ անհրաժեշտության • Պոմպակայանի նախագիծ՝ ըստ անհրաժեշտության, առանձին նախագծային փաթեթով՝ շենքերի բաժանորդներին մատակարար կազմակերպության կողմից ծառայությունների մատուցումը ապահովելու համար • Ներքին և արտաքին հաղորդակցուղիների կառուցման (վերակառուցման) նախագիծ • Բաց խաղահրապարակի կառուցման նախագիծ • Տարածքի բարեկարգման նախագիծ					

		• Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովող միջոցառումներ՝ թեքահարթակների, հատուկ բազրիքների, վերելակների, դռների բացվածքների, լուսավորության սարքերի, ավտոկայանատեղերի նախատեսման նորմատիվ պահանջներ • Այլ ենթակառուցվածքներ ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների նախագիծը մշակել կառուցապատման չափորոշիչներին համապատասխան՝ համայնքի զարգացման ծրագրի, գլխավոր հատակագծի, ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով հաստատված պահանջների շրջանակներում: Հիմնավորում՝ ՀՀ ....թվականի պետական բյուջե, ՀՀ վարչապետի հանձնարարականներ, ՀՀ կառավարության որոշումներ, ճարտարապետահատակագծային առաջադրանք, ինժեներական ենթակառուցվածքների տեխնիկական պայմաններ Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ - հողհատկացման հիմքեր - ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ, - շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացություններ					
		- արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի եզրակացություն - ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացություն(-ներ), - նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), - հանույթ, - չափագրություններ, - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, մշակույթ, արտակարգ իրավիճակներ): Ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներում պարտադիր ներառման ենթակա են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ նախատեսված հիմնական պահանջները՝ սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) ապահովման, շենքերի նկուղային հատվածներում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական սենքերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ միջոցառումների նախատեսման, տարածքների բարեկարգման և շրջակա					

		միջավայրի պահպանմանն ու կլիմայի փոփոխություններին հարմարվողականությանն ուղղված՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության, ծառերի տնկարկով ուղեկցվող կանաչապատման նորմատիվ պահանջները: Տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծի մշակման ընթացքում ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թվականի դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված ՀՀ մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցով և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.06.2022թ N12-Ն հրամանով հաստատված «Տարածքների բարեկարգում» շինարարական նորմերով: Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների (շենքերի նկուղային հատվածներում պարզ թաքստոցի) նախատեսումն իրականացնել գործող նորմատիվ իրավական ակտերին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 06.04.2022թ N06-Ն հրամանով հաստատված <ՀՀ քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ> շինարարական նորմերին համապատասխան: Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝ - <Քաղաքաշինության մասին> օրենք - <Քաղաքացիական պաշտպանության մասին> օրենք - <Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին> օրենք - <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> օրենք - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ <ՀՀՇՆ I-3.01.01-2008 <Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում> շինարարական նորմերը հաստատելու մասին> N11-Ն հրաման - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի <ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N 263-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հունվարի 31-ի ՀՀՇՆ 31-01-2014 <Բնակելի շենքեր.Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր>					

		շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N 93-Ն հրաման - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի <ՀՀՇՆ 20-04-2020 <Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 102-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՀՇՆ 31-03-<Հասարակական շենքեր և շինություններ> Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N 95-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 <Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին> N 253-Ն հրաման, - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական հորմերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 56-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 83-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 78-Ն հրաման 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 80-Ն հրաման,					

		-ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 103-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.12.2022թ N31-Ն հրամանով հաստատված <ՀՀՇՆ 24-02-2022 «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ> շինարարական նորմեր - «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, - «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» N 1504-Ն որոշում, - ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ - ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> N596-Ն որոշում - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի <Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի նոյեմբերի 25-ի N168 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին> N282-Ն հրաման					

*Գնման գործընթացն իրականացվում է ՀՀ կառավարության 21.04.2023թ. թիվ 579-Ն որոշման համաձայն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Արբակ և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Նորագավիթ, Արտաշատի խճ. 66 տ
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011030534	Հ/Հ 1930003063270100
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 02228418
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	«Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«25» մայիսի 2023թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-23/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2023թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	5134	71241200/3	«Մարգարա» մաքսային կետի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ					13 862 700	13 862 700	28 291 400	28 291 400	28 291 400	28 291 400	28 291 400	28 291 400	28 291 400

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Արբակ և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Նորագավիթ, Արտաշատի խճ. 66 տ
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 1930003063270100
ՀՎՀՀ 02228418
«Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« 25 » Դեկտեմբեր 2023թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-23/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 25 » Հոկտեմբեր 2023թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-23/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն